

«Կազմված է «08» հունվարի 2016թ.
Բաղկացած է 9 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 2

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Մ Է

«Բեսթ Սոլյուշն» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
միակ մասնակցի՝ 08.01.2016թ.
կայացրած միանձնյա որոշմամբ
Որոշում՝ թիվ 2

«Բեսթ Սոլյուշն» ՍՊԸ տնօրեն՝

Վահե Աստվածատրյան



Գ Ը Մ Ե Ց Վ Ա Մ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՔԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ՝ 10.11.2015թ..
գրանցման թիվ՝ 264.110.878093
վկայական՝ N 03Ա102893
հարկ վճարողի հաշվառման համար՝
00148152

10.11.2016թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
կրավարանական տեղանք պետական ռեգիստրի
_____ տարածքային բաժնի կողմից
_____ 20 ____ թ.

_____ Տ/Բ պետ՝

«ԲԵՍԹ ՍՈԼՅՈՒՇՆՍ»

ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ք. Երևան - 2016թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «Բեսթ Սոլյուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ֆազմալիերություն է, այսուհետ՝ Ընկերություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:
- 1.2. Ընկերությունը հիմնադրվել է 06.11.2015թ.-ին ստորագրված Ընկերության հիմնադրի որոշման հիման վրա:
- 1.3. Ընկերության հիմնադրի /հիմնադիրների/ (այսուհետ՝ մասնակից/ներ) և ընկերության միջև ծագող բոլոր իրավահարաբերությունները կարգավորվում են սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ:
- 1.4. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ սահմանադրությամբ, ՀՀ գործող օրենքներով և իրավական այլ ակտերով, ինչպես նաև՝ սույն կանոնադրությամբ:
- 1.5. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
 - Հայերեն՝ լրիվ՝ «Բեսթ Սոլյուշնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
 - Հայերեն՝ կրճատ՝ «Բեսթ Սոլյուշնս» ՍՊԸ
 - Անգլերեն՝ լրիվ՝ «Best Solutions» limited liability company
 - Անգլերեն՝ կրճատ՝ «Best Solutions» LLC
 - Ռուսերեն՝ լրիվ՝ «Бест Сольюшнс» общество с ограниченной ответственностью
 - Ռուսերեն՝ կրճատ՝ «Бест Сольюшнс» ООО
- 1.6. Ընկերության գտնվելու վայրն (իրավաբանական հասցեն), է՝
 - 0033, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 532ենք, բնակարան՝ 24

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

- 2.1. Ընկերության գործունեության նպատակը շահույթի ստացումն է:
- 2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝
 - փաստաբանական ծառայությունները,
 - իրավաբանական ծառայությունները,
 - հաշտարարական ծառայությունները:
- 2.3. Ընկերությունն ունի օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրում է համապատասխան քաղաքացիական պարտականություններ:
- 2.4. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն, եթե դրա իրականացումը չի հակասում սույն կանոնադրությանը և ՀՀ գործող օրենսդրությանը:

- 2.5. Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Հնկերությունը կարող է զբաղվել միայն հատուկ լիցենզիայի և թույլտվությունների հիման վրա, որոնց տրամադրման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:
- 2.6. Հնկերության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

- 3.1. Հնկերությունը ստեղծված է համարվում և իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:
- 3.2. Հնկերությունն ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտականություններ:
- 3.3. Հնկերությունն ունի սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրում է այդ գործունեության իրականացման հետ կապված համապատասխան պարտականություններ:
- 3.4. Հնկերությունն իրեն պատկանող քաղաքացիական իրավունքները՝ ներառյալ դրանց պաշտպանությունը, իրականացնում է իր հայեցողությամբ և ընկերության կողմից դրանց չիրականացումը կամ իրականացնելուց հրաժարվելը չի հանգեցնում այդ իրավունքների դադարմանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
- 3.5. Հնկերությունը որպես սեփականություն՝ ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:
- 3.6. Հնկերությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ:
- 3.7. Հնկերությունը կարող է դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 3.8. Հնկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:
- 3.9. Հնկերությունը ունի կլոր կնիք՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն անվանումներով, ֆիրմային անվանում, հաշվարկային հաշիվ բանկում՝ 22 արժույթով և արտարժույթով:
- 3.10. Հնկերությունն իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել շարժական և անշարժ գույք, նաև՝ արժեթղթեր, իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք և դրանցից ստացած եկամուտները կամ այլ օգուտները:
- 3.11. Հնկերությունն իրավունք ունի կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները՝ իր նախընտրած եղանակով և կարգով:

- 3.12. Ընկերությունն իրավունք ունի մատուցել ծառայություններ, կատարել աշխատանքներ, օգտվել այլ անձանց մատուցած ծառայություններից և կատարած աշխատանքներից:
- 3.13. Ընկերությունն իրավունք ունի կնքել 22 օրենսդրությամբ նախատեսված և չնախատեսված պայմանագրեր:
- 3.14. Ընկերությունն իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր եղանակներով իրականացնել իր քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 4.1. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:
- 4.2. Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:
- 4.3. Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և միայն իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒԼՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 5.1. Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝
 - 5.1.1. Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը:
 - 5.1.2. Մասնակցել ընկերության ընդհանուր ժողովներին, շահմանված կարգով առաջարկներ ներկայացնել, քվեարկելով կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակով:
 - 5.1.3. Ստանալ ընկերության գործունեության արդյունքում ստեղծված շահույթի համապատասխան մասը (դիվիդենդ):
 - 5.1.4. Սույն կանոնադրությամբ որոշված սահմաններում տեղեկություններ ստանալ ընկերության գործունեության վերաբերյալ, ծանոթանալ հաշվապահական հաշվառմանը, հաշվետվությանը և ընկերության գործունեության վերևաբերյալ այլ փաստաթղթերին:
 - 5.1.5. Մույն կանոնադրությամբ սահմանված կարգով օտարել կանոնադրական կապիտալում ունեցած իր բաժնեմասը՝ լրիվ կամ մասնակի:
 - 5.1.6. Մտանալ գնելու/ձեռք բերելու/ նախապատվության իրավունք՝ այլ մասնակիցների կողմից իրենց բաժնեմասերը կամ դրանց մասը օտարելու դեպքում:

- 5.1.7. Ընկերության չուժարման դեպքում ընկերության բոլոր պարտավորությունների կատարումից հետո մնացած (մնացորդ) գույքից ստանալ մաս՝ կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեմասին համապատասխան:
- 5.2. Ընդհանուր ծախսում քվեարկության ժամանակ մասնակիցներն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակություն:
- 5.3. Ընկերության մասնակիցը կարող է իր ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած իր բաժնեմասը կամ դրա մի մասը օտարել երրորդ անձանց՝ միայն Ընկերության մյուս բոլոր մասնակիցների համաձայնության դեպքում:
- 5.4. Ընկերության մասնակիցները պարտավոր են՝
- 5.4.1. Ներդրումներ կատարել ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 5.4.2. Չիրապարակել ընկերության գործունեությանը վերաբերող զաղտնիք պարունակող տեղեկություններ, բացառությամբ՝ օրենքով սահմանված դեպքերից:
- 5.4.3. Պահպանել սույն կանոնադրության և ընդհանուր ժողովի սահմանած կանոնների պահանջները:
- 5.5. Ընկերության մասնակիցները կրում են նաև օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:
- 5.6. Ընկերությունն իր պարտականությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող ամբողջ գույքով:
- 5.7. Մասնակցի կողմից սույն կանոնադրությամբ նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերում այդ մասնակիցը պարտավոր է դրա հետևանքով ընկերությանը կամ մյուս մասնակցին/մասնակիցներին/ պատճառած վնասը փոխհատուցել ամբողջությամբ:
- 5.8. Ընկերության մասնակիցը /մասնակիցները/, որը /որոնք/ տնօրինում է /են/ ընկերության ոչ պակաս 10% (տասը տոկոս) բաժնեմասը, իրավունք ունի /ունեն/ դատական կարգով պահանջել ընկերության այդ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե՝ վերջինս իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

- 6.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է նրա մասնակիցների ավանդների արժեքից: Կանոնադրական կապիտալը սահմանում է

պարտատերերի շահերը երաշխավորող Հնկերության գույքի նվազագույն չափը:

- 6.2. Հնկերության կանոնադրական կապիտալի չափը, բաժնեմասերի չափը (անվանական արժեքը), ինչպես նաև բաժնեմասերի բաշխման համամասնությունը մասնակիցների միջև արտացոլված են սույն կանոնադրության անբաժանելի մասը հանդիսացող հավելվածում:
- 6.3. Հնկերության կանոնադրական կապիտալի և մասնակիցների ավանդների անվանական արժեքները որոշվում են ՀՀ դրամով:
- 6.4. Հնկերության մասնակիցների բաժնեմասերի չափը որոշվում է տոկոսներով, որը նաև քվեարկության ժամանակ համարժեք է նրանց ձայներին («մեկ տոկոս = մեկ ձայն» սկզբունքով):
- 6.5. Հնկերության մասնակիցը պարտավոր է իր ավանդը լրիվ մուծել մինչև ընկերության պետական գրանցումը: Հնկերության գրանցումից հետո ընկերության կանոնադրական կապիտալի փոփոխման կամ ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասի փոփոխման դեպքում՝ ավանդի մուծման կարգը և ժամկետները սահմանվում են Հնկերության կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի կողմից:
- 6.6. Հնկերության ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել պահուստային և այլ եիմնադրամներ, ինչպես նաև դրանց հատկացումների չափը և կարգը:

7. ՀՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 7.1. Հնկերության մասնակիցն իրավունք ունի Հնկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների:
- 7.2. Հնկերության մասնակցի կողմից իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձանց օտարել թույլատրվում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ միայն:
- 7.3. Հնկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից, այն գնով, որն առաջարկվել է երրորդ անձանց:
- 7.4. Հնկերության մասնակիցը իր բաժնեմասը (դրա մասը) կարող է վաճառել երրորդ անձի/անձանց՝ միայն Հնկերության մնացած /բոլոր/ մասնակիցների համաձայնության պարագայում: Հնկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը) երրորդ անձին, պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել Հնկերությանը՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները: Հնկերությունն այդ մասին հինգ օրյա ժամկետում գրավոր հայտնում է Հնկերության մասնակիցներին, որոնք էլ պարտավոր են օտանօրյա

ժամկետում տեղեկացնել տվյալ մասնակցի կողմից իր բաժնեմասը (դրա մտար) երրորդ անձին/անձանց վաճառելու/փոխանցելու իրենց համաձայնության կամ անհամաձայնության մասին:

- 7.5. Մասնակցի բաժնեմասը (դրա մասը) Հնկերության կողմից ձեռք բերվելու դեպքում Հնկերությունը պարտավոր է այն իրացնել այլ մասնակիցների կամ երրորդ անձանց՝ օրենքով նախատեսված ժամկետներում և կարգով կամ նվազեցնել իր կոնոնադրական կապիտալը՝ օրենքով սահմանված կարգով:
- 7.6. Հնկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են Հնկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին՝ միայն Հնկերության մնացած մասնակիցների համաձայնությամբ. համաձայնություն չտալու դեպքում՝ Հնկերությունը պարտավոր է մասնակցի ժառանգներին (իրավահաջորդներին) վճարել բաժնեմասի (դրա մասի) արժեքը (դրամով կամ բնեղենով): Համաձայնությունը համարվում է չտրված, եթե Հնկերության մասնակցի կողմից Հնկերությանը կամ բոլոր մասնակիցներին ուղղված համապատասխան փաստաթղթերով կցված դիմումին տասնհինգօրյա ժամկետում պատասխան չի տրվել:
- 7.7. Հնկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասը անցնում է ընկերությանը:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 8.1. Հնկերության կառավարման կարգը և կառավարման մարմինների իրավասությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ և օրենքով:
- 8.2. Հնկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է (այսուհետ՝ նաև՝ ընդհանուր ժողով):
- 8.3. Մասնակիցներն ընդհանուր ժողովին մասնակցում են անձամբ կամ իրենց կողմից ընկերության մասնակիցների կազմից նշանակված լիազոր ներկայացուցիչների միջոցով:
- 8.4. Ընդհանուր ժողովում մասնակիցներն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:
- 8.5. Ընդհանուր ժողովն իրավագոր է, եթե ժողովին ներկա են ընդհանուր ժողովի ձայների 50%-ից ավել ունեցող մասնակիցները (նրանց ներկայացուցիչները):
- 8.6. Հնկերության ընդհանուր ժողովները հրավիրվում են ընկերության գործադիր մարմնի կողմից:
- 8.7. Հնկերության ընդհանուր ժողովի լիազորությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ և օրենքով:
- 8.8. Հնկերության Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերաբառնված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել ընկերության գործադիր մարմնի որոշմանը, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

- 8.9. Ընկերության գործադիր մարմնի ղեկավարը ընկերության տնօրենն է, որն ընտրվում է ընկերության ընդհանուր ժողովի կողմից:
- 8.10. Ընկերության տնօրենը՝
- առանց լիազորագրի գործում է ընկերության անունից, այդ թվում՝ ներկայացնում է նրա շահերը և կնքում գործարքներ.
 - տալիս է լիազորագրեր՝ ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.
 - տալիս է հրամաններ՝ ընկերության աշխատակիցներին պաշտոնների նշանակման, նրանց տեղափոխման և ազատման վերաբերյալ, կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր.
 - իրականացնում է օրենքով կամ սույն կանոնադրությամբ՝ ընդհանուր ժողովի, ընկերության խորհրդի իրավասությանը չվերապահված այլ իրավունքներ:
- 8.11. Ընկերության տնօրենի իրավունքները և պարտականությունները սահմանվում են 22 օրենսդրությամբ և Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագրով:
- 8.12. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել ընկերության տնօրենի հետ կնքված պայմանագիրը:
- 8.13. Ընկերության տնօրենը իր պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործի բարեխիղճ՝ ելնելով ընկերության շահերից:
- 8.14. Ընկերության տնօրենը Ընկերության առջև 22 օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր գործողությունների կամ անգործության հետևանքով Ընկերությանը պատճառված վնասների համար:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒՇԱՐՈՒՄԸ

- 9.1. Ընկերությունն օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է վերակազմակերպվել այլ ընկերության՝ միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման, վերակազմավորման միջոցով կամ լուծարվել:
- 9.2. Ընկերության վերակազմակերպումը կամ լուծարումը կատարվում է նրա հիմնադիրների (մասնակիցների) ընդհանուր ժողովի որոշման հիման վրա, կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ դատական կարգով՝ դատարանի վճռով:
- 9.3. Ընկերության լուծարման և վերակազմակերպման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

**«ԲԵՍՔ ՍՈՒՅՈՒՇՆԱ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ**

**10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՓԸ ԵՎ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ**

- 10.1. Ընկերության կանոնադրական կախիտալը սահմանված է 10'000 (տասը հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 100 (մեկ հարյուր) հատ բաժնեմասերի՝ յուրաքանչյուրի անվանական արժեքը՝ 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ:
- 10.2. Ընկերության մասնակիցները և նրանց բաժնեմասերը.

Մասնակցի քաղաքացիությունը, անունը, ազգանունը, անձնագրային աղյուսնիքը, հաղցեն	Ավանդի չափը (ՀՀ դրամ)	Բաժնեմասերի քանակը (հատ)	Բաժնեմասերի չափը (տոկոս)	Ստորագրություն
Անուն՝ Վահե Ազգանուն՝ Ասուխատրյան քաղաքացիությունը՝ ՀՀ նույնականացման քարտ համար՝ 007515893, տրվել է՝ 01.12.2015, 004-ի կողմից հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղդասյան 53 շենք, բնակարան՝ 24	10'000	100	100	